Հաստատում եմ՝
հիմք մանկավարժական խորհրդի
որոշում 31.08.2023թ.
Տնօրեն՝ Ա. Ավագյան

<<ՀՀ ԿԳՄՍՆ Ալավերդու ՍայաթՆովայի անվան թիվ 8 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

2022_2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

# Տ Ա Ր Ե Կ Ա Ն  Պ Լ Ա Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՐՁ

ՀՀ ԿԳՄՍՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ

ԹԻՎ 8 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

*Մեր ուժը մեր մտքի ու բազկի մեջ է:*

Կրթությունը մարդկային քաղաքակրթության գոյատևումն ու առաջընթացն ապահովող հիմնական գործոններից է:

Ուսումնական տարվա սկիզբը մեր երկրում զուգակցվում է Գիտելիքի օրվան: Եվ ամենևին էլ պատահական չէ այդ զուգակցումը: Այն խորհրդանշվում է գիտելիքի ձեռքբերման, կյանքի բոլոր ոլորտներում նորի ու առաջավորի արմատավորման, սերունդների կրթական մակարդակի բարձրացման գաղափարներով:

Սիրելի՛ սովորողներ, մենք ապրում ենք անչափ կարևոր և բարդ ժամանակաշրջանում: Մեր պետության առջև կան մարտահրավերներ, որոնք պետք է պատվով լուծենք, հատկապես դու՛ք մեծ դերակատարություն ունեք պետականաշինության մեջ:

Կրթությունը մեր ժողովրդի պատմության մեջ եղել է առաջնային դիրքերում: Դարերի խորքից եկել և մեր սերունդներին են հասել գիտելիքի ձեռքբերման լավագույն փորձն ու ավանդույթները:

Մեր կրթօջախը տալիս է ձեզ որակյալ կրթություն ստանալու հնարավորություն: Այդ մասին են վկայում 2021-2022 ուստարում մեր սաների հաջողությունները առարկայական օլիմպիադաներում և մրցույթներում: Մեր 34 (երեսունչորս) շրջանավարտներից 22(քսաներկուսը) ընդունվել են հեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատություններ, 4 (չորսը)՝ պետպատվերի շրջանակներում: Մեր կրթօջախում գործում է KODU GAME LAB, Արմաթ ինժեներական լաբորատորիայի ռոբոտաշինության խմբակը:

Սիրելի՛ սովորողներ, մեր պետականությունը մեր բարձրագույն նվաճումն է: Մենք պետք է դա գիտակցենք:

«ՀՀ ԿԳՄՍՆ Ալավերդու Սայաթ-Նովայի անվան թիվ 8 ավագ դպրոց» **ՊՈԱԿ-ը 2022-2023** ուստարում իր աշխատանքային պլանի գլխավոր նպատակներից է համարում սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը առկա համաճարակային վտանգի պայմաններում՝ առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍՆ նախարարի հրամաններով, նորմատիվ իրավական ակտերով:

Հետևաբար, նոր ուսումնական տարում կարևոր ուղղություններ են՝

1. Ռազմահայրենասիրական կրթություն և դաստիարակություն
2. Ուսումնական որակի բարձրացում
3. Մասնագիտական կողմնորոշում
4. Իրավական գիտակցության բարձրացում:

# I ԲԱԺԻՆ

## Հիմնական պարտադիր կրթության իրականացում

| Հ/հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարող անձ | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Համայնքի տարածքի սվազ դպրոցի տարիքի 10_րդ դասարանի սովորողներին ընդգրկել ուսման մեջ՝ ըստ հոսքային խմբերի | օգոստոսի 19-31 | տնօրեն, ՈՒԱԳՏ ուսուցիչներ | |
| 2. | Հրամանագրել ԴԿՏՀ ում 10-րդ դասարան դիմած սովորողներին՝ օրենքով սահմանված փաստաթղթերով և կարգով: | օգոստոսի 19_31 | տնօրեն, ՈՒԱԳՏ | |
| 3. | Աշխատանքները իրականացնել ըստ ՀՀ ԿԳՄՍՆ և ԱՆ կողմից տրամադրված համաճարակային պայմաններում առկա ուսուցման կազմակերպման ուղղեցույցների, հրամանների, կարգերի ու հրահանգների : | ուստարվա սկզբում, ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ ուսուցիչներ | |
| 4. | Ապահովել անվտանգ ուսումնական միջավայր բոլոր դասարաններում, միջանցքներում, սանհանգույցներում տեղադրելով համապատասխան ախտահանիչ նյութեր: | ուստարվա սկզբում, ընթացքում | տնօրեն, բուժքույր տեխնիկական համակազմ | |
| 5. | Աշխատանք տանել դեռահասների շրջանում՝ ընդգրկելով սվազ դպրոցի սովորողներին ներդպրոցական կյանքին | ուստարվա սկզբում, ընթացքում | Տնօրինությու դասղեկներ աշակերտական խորհուրդ | |
| 6. | Դպրոցում օժանդակ պայմաններ ստեղծել սոցիալապես անապահով և անբարենպաստ ընտանիքների սովորողների համար: | ուստարվա ընթացքում | տնօրինություն, դասղեկներ ծնողական խորհուրդ | |
| 7. | Նպատակային օգտագործել հաստատության, բյուջեն ֆինանսական միջոցները բոլոր ուղղություններով: | ուստարվա ընթացքում | տնօրեն, դպրոցի կառավարման խորհուրդ, | |
| 8. | Քննարկել դպրոցի կառավարման Խորհրդի հետ՝՝ սահմանված կարգի համաձայն՝ հաստատության առջև ծառացած խնդիրները: | ուստարվա ընթացքում | տնօրեն կառավարման խորհուրդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9. | Արդյունավետ համագործակցել աշակերտական խորհրդի հետ,քննարկել և կյանքի կոչել կառուցողական առաջարկները, խթանել ինքնավարության գործընթացը նպաստել կարողունակությունների զարգացմանը սովորողների շրջանում | ուստարվա ընթացքում | տնօրինություն, դասղեկներ | |
| 10. | Համագործակցել դպրոցին կցված անչափասների տեսուչ Ա.Մոսինյանի հետ՝ դեռահասների իրավագիտակցությունը բարձնացնելու նպատակով<br>Դժվար դաստիարակվող,չառաջադիմող սովորողների նկատմամբ ցուցաբերել հատուկ ուշադրություն | ուստարվա ընթացքում | տնօրեն ՈւԱԳՏ Անչափահասների տեսուչ դասղեկներ | |
| 11. | Ուսումնական տարվա ընթացքում ամենամսյա ռեժիմով էլեկտրոնային դասամատյանից դուրս բերել ընթացիկ գնահատականները և տեղեկացնել սովորողների ծնողներին | Ուստարվա ընթացքում | ՈՒԱԳՏ, դասղեկներ | |
| 12 | Աշխատանք տանել 10_12րդ դասարանների ուսման մեջ թերացող և դժվար դաստիարակվող սովորողների հետ՝ համագործակցելով նրանց ծնողների հետ: | ուստարվա ընթացքում | ՈՒԱԳՏ դասղեկներ, ծնողխորհուրդ, ուսուցիչներ | |
| 13 | Պարտադիր ուսուցման իրականացման աշխատանքներին և սովրաղների կողմից պետական կրթական չափորոշիչներով նախատեսված և որակյալ կրթության ապահովման նպատակով՝ բոլոր աշխատանքներին մասնակից դարձնել կրթական գործընթացի մասնակիցներ հանդիսացող .սովորողներին, ծնողներին, մանկավարժական աշխատողներին, վարչական համակազմին. համայնքի ներկայացուցիչներին՝ Կանոնադրության համաձայն: | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |

Դպրոցի տնօրեն՝ Անուշ Ավագյան

# II ԲԱԺԻՆ
## Աշխատանք մանկավարժական կադրերի հետ

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 1. | Նշանակել դասղեկներ, մեթոդմիավորումների նախագահներ: | օգոստոս 22-30 | տնօրեն | |
| 2. | Անցկացնել մեթոդմիավորումների նախագահների սեմինար-խորհրդակցություն,իրազեկել կրթական ոլորտում նախատեսվող նոր փոփոխությունների մասին,ինչպես նաև նոր չափորոշչի ներդրման,կիրառման մասին | սեպտեմբերի 1-10 | տնօրեն, ՈւԱԳՏ | |
| 3. | Անցկացնել դասղեկների սեմինար-խորհրդակցություն, նրանց ծանոթացնել դասղեկի իրավունքներին ու պարտականություններին: | սեպտեմբերի 1-10 | տնօրեն, | |
| 4. | Դպրոցում կազմակերպել իրազեկման նպատակով լսումներ մանկավարժական աշխատողների ՝ ուսուցիչների, սովորողների և ծնողների համար՝ ներքին կարգապահական կանոնների վերաբերյալ | ուստարվա ընթացքում | տ ն օ ր ե ն Ո ւ Ա Գ Տ | |
| 5. | Պլանավորել մ/մ-ների գործունեությունը՝ հաշվի առնելով ուստարվա ընթացքում դպրոցի ընդհանուր նպատակները և խնդիրները՝ այն տեղադրելով ԿԳՄՍ-ի կողմից երաշխավորված կայքերում: | սեպտեմբերի 1-10 | ՈւԱԳՏ | |
| 6. | Առանձին ուսումնասիրությունների և չափորոշիչների միջոցով որոշել առավել բարձր վարկանիշ ունեցող, կրթության ժամանակակից պահանջներին բավարարող ուսուցիչներին | 1-ին և 2-րդ կիսամյակ | տնօրեն, ՈւԱԳՏ մ/մ-ների ղեկավարներ | |
| | Ուսուցիչներին՝ուղղորդել մասնակցել սահմանված կարգով վերապատրաստումների | ո ւ ս տար վ ա ը ն թ ա ց ք ո ւ մ | տն օ ր ե ն | |
| 7. | 2022_2023 ուստարում՝ ահմանված կարգով բնագիտամաթեմատիկական մ/մ թվով 3 ուսուցիչներին ուղարկել հերթական ատեստավորման | ուստարվա ընթացքում | տնօրեն մ/մ | |
| 8. | Ուսուցիչներին ընդգրկել հեռավար վերապատրաստումներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ | |
| 9. | Ուսուցիչներին ցույց տալ մեթոդական օգնություն: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10. | Փոխադարձ դասալսումների միջոցով նպաստել մանկավարժների համագործակցությանը, մ/մ աշխատանքների արդյունավետությանը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ, մ/մ նախագահներ | |
| 11. | Գրադարանային ֆոնդը օգտագործել առավել արդյոհինավետ, հնարավորինս ապահովել սովորողներին, դասագրքերով,ուսումնական նյութերով | ուստարվա ընթացքում | տնօրեն, գրադարանա-վար | |
| 12. | Ուսուցիչներին մշտապես հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին՝ կազմակերպել սեմինարներ, մանկավարժա-մեթոդական առկա և հեռավար | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ | |
| 13. | Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումների, ԿԳՄՍ նախարարության, , հրամանների և այլ նորմատիվ փաստաթղթերի բովանդակությանը: | պարբերաբ. | տնօրեն, | |
| 14 | Ստեղծագործող և տարակարգ ունեցող ուսուցիչներին խրախուսել,օգտագործել նրանց մանկավարժական փորձը, փորձառությունը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ | |
| 15 | Կատարել աշխատանքներ ավագ դպրոցի սաների ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: | Ուստարվա ընթացքուն | Տնօրեն ՈՒԱԳՏ զինղեկ | |
| 16 | Կատարել աշխատանքներ սեյսմիկ անվտանգության կենսագործունեության իրազեկման ուղությամբ, կազմակերպել գործնական պարապմունքներ / տագնապ-վարժություն/ | Ուստարվա ընթացքում | Տնօրեն զինղեկ ՈւԱԳՏ | |

Դպրոցի տնօրեն՝ Ա. Ավագյան

2022-2023 ուսումնական տարի

Մանկավարժական խորհրդի գործունեության
պլանավորումը, գրաֆիկը, օրակարգը
1-ին նիստ
30.08.2022

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 1. | Մանկավարժական խորհրդի կազմի և քարտուղարի ընտրություն և հաստատում | Տնօրեն Արհկոմի նախագահ | |
| 2. | Դպրոցի տարեկան ուսումնադաստիարակչական և միջոցառումների պլանի քննարկում և հաստատում | ՈՒԱԳՏ | |
| 3. | 2022-2023 ուստարվա կրթադաստիարակչական զարգացման ծրագիրը հաստատելու մասին | ՈՒԱԳՏ | |
| 4. | Ներքին կարգապահական կանոնների և աշխատակարգի քննարկում : | տնօրեն ՈՒԱԳՏ | |
| 5. | Հաստատության ուստարվա պլանի դասաբաշխման, դասարանների կոմպլեկտավորման մեթոդմիավորումների, դասղեկների խմբակի ղեկավարների նշանակում և հաստատում | ՈՒԱԳՏ | |
| 6. | Մ/մ –ի կողմից դպրոցական ուսպլանի դպրոցական պարտադիր բաղադրիչի բաշխված ժամաքանակի հաստատում | տնօրեն մ/մ ղեկ. | |
| 7. | 2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի վերլուծություն | տնօրեն | |
| 8. | 2022-2023 ուստարվա ավագ դասարաններում սահմանված կարգով բնագիտամաթեմատիկական և հումանիտար առարկաների հոսքային դասարաններրի ձևավորում:Հոսքային ուսուցման ուսպլանի ներկայացված նախագծի հաստատում: | տնօրեն | |
| 9. | Կառավարման խորհրդի նիստին նոր ուսումնական տարվա ֆինանսական ծախսերի նախահաշվում հոսքային դասարանների համար սահմանված չափաբաժիններին համապատասխան ``նախախահաշվի հաստատման առաջարկություն: | տնօրեն | |
| 10. | Հաստատությունում 2022-2023 ուսումնական տարում՝ պետական չափորոշչին համապատասխան ուսումնական հիմնական ծրագրերի իրականացում և վերահսկողություն | Տնօրեն ՈւԱԳՏ մ/մ նախագահներ | |

2022-2023 ուսումնական տարի

Մանկավարժական խորհրդի գործունեության պլանավորումը, գրաֆիկը, օրակարգը

2-րդ նիստ

03.11.2022

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 1. | Առանց ներդրման պետության կողմից տրամադրվող դասագրքերի վարձավճարների հատկացման և դպրոցի սոցիալապես անապահով սովորողների ցուցակի հաստատում: | տնօրեն ՈւԱԳՏ | |
| | Էլեկտրոնային մատյանների վարման պահանջների քննարկում / գրանցման, գնահատման,բացակայությունների մասին/ | Տնօրեն ՈՒԱԳՏ | |
| | | | |
| 1. | Առարկայական օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների ուղղությամբ միջոցառումների իրականացում: | Տնօրեն ՈՒԱԳՏ մ/մ նախագահներ | |
| 2. | Դասարանի ղեկավարի և մ/մ նախագահների աշխատանքների էլեկտրոնային թղթապանակի ստեղծում՝,փոփոխությունների կատարում ԿԶՆԱԿ-ի պահանջերին համահունչ: | ՈՒԱԳՏ մ/մ նախագահներ դասղեկներ | |
| 3. | Համաներառական կրթության համատեքստում՝ ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթական կարիքների բավարարմանը ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտության մասին իրազեկում. ԿԱՊԿՈՒ աշակերտների հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները: | տնօրեն ՈՒԱԳՏ | |

2022-2023 ուսումնական տարի

Մանկավարժական խորհրդի գործունեության պլանավորումը, գրաֆիկը, օրակարգը

3-րդ նիստ
22.12.2022

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 1. | 12-րդ դասարանի հունվարին կայանալիք պետական ավարտական քննությունների ժամանակացույցի և աշխատակարգի մասին իրազեկում: | տնօրեն ՈՒԱԳՏ | ՀՀ ԿԳՄՍ նախարարի 06.12.2022 հր.79-Ն |
| 2. | 12-րդ դասարանի հունվարին կայանալիք պետական ավարտական քննությունների քննական հանձնաժողովների կազմի հաստատում | տնօրեն | |
| 3 | Ներդպրոցական փուլի առարկայական օլիմպիադաներում հաղթած աշակերտների տարածքային փուլի մասնակցների ցուցակի հաստատում: | ՈՒԱԳՏ մ/մ նախագահներ | |
| 4. | Մ/մ- րի նախագահների զեկույցը կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ | ՈՒԱԳՏ մ/մ ղեկավարներ | |
| 4. | Էլեկտրոնային դասամատյաններում, ԿՏԱԿ-ի կողմից տրամադրված հարթակներում կատարված աշխատանքների նախնական վերլուծություն | տնօրեն ՈՒԱԳՏ | |

2022-2023 ուսումնական տարի

Մանկավարժական խորհրդի գործունեության պլանավորումը, գրաֆիկը, օրակարգը

4-րդ նիստ

28.12.2022

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 1. | Ուսումնական հաստատության 10-12-րդ դասարանների 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում | Տնօրեն ՈՒԱԳՏ, դասղեկներ | |
| 2. | 2022-2023 ուստարվա 12-րդ դասարանի սովորողներին հունվարին անցկացվող պետական ավարտական քննություններին մասնակցության թույլատրում | Տնօրեն | |
| 3. | 12-րդ դասարանի սովորողներին առարկայական խմբերում ընդգրկելու մասին 2-րդ կիսամյակի ընթացքում | ՈՒԱԳՏ | |
| 4 | 2022-2023 ուստարվա ուսումնական պլանի երաշխավորված առարկայացանկի առարկաների 10-րդ և 11-րդ դասարանների երկրորդ կիսամյակի դպրոցական բաղադրիչի վերաբաշխում: | Տնօրեն | |
| 5. | Էլեկտրոնային դասամատյաններում ուսուցիչների կողմից կատարված աշխատանքների վերլուծություն և ի հայտ եկած թերությունների քննարկում | տնօրեն ՈՒԱԳՏ | |
| 6. | 120-200 ժամ և ավելի բացակայություն ունեցող սովորողների մասին տեղեկատվության հաղորդում և տեղեկատվության վերլուծություն: | տնօրեն ՈՒԱԳՏ դասղեկներ | |

2022-2023 ուսումնական տարի

Մանկավարժական խորհրդի գործունեության
պլանավորումը, գրաֆիկը, օրակարգը

5-րդ նիստ
03.02.2023

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| .1 | Դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային փուլի արդյունքների ամփոփում, մարզային փուլի նախապատրաստում: | Տնօրեն<br>ՈՒԱԳՏ | |
| 2 | 2023 թվականին դպրոցական բաժանորդային ծրագրի մասին իրազեկում` ըստ ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացված ցանկի: Հանրակրթական ուսումնական հաստատությունների բարեվարքության կանոնների առաջարկվող փոփոխությունների մասին ծանոթացում և քննարկում` նախագծի համաձայն:<br><br>ՀՀ ԿԳՄՍՆ կողմից ընդունված հրամանների բովանդակության իրազեկմանն ուղղված աշխատանքների կազմակերպում | Տնօրեն<br>ՈՒԱԳՏ | |
| 3 | Էլեկտրոնային մատյանների վարման մասին տեղեկատվության հաղորդում: | ՈՒԱԳՏ | |
| 4. | 2022-2023 ուստարվա շրջանավարտների քննությունների հետ կապված աշխատանքների նախապատրաստման մասին հաղորդում:<br>Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների կազմի մասին իրազեկում | ՈՒԱԳՏ | |

2022-2023 ուսումնական տարի

Մանկավարժական խորհրդի գործունեության
պլանավորումը, գրաֆիկը, օրակարգը

6-րդ նիստ

17.03.23

| | | |
|---|---|---|
| 1. | 2022-2023 ուստարվա շրջանավարտների հայտագրման գործընթացի կազմակերպում սահմանված ժամկետում: | տնօրեն<br>ՈՒԱԳՏ |
| 2. | Մեթոդական միավորումների կատարած աշխատանքների հաշվետվությունների ներկայացում | ՈՒԱԳՏ<br>մ/մ<br>նախագահներ |
| 3. | Առարկայական օլիմպիադաներում սովորողների արդյունքների մասին հաղորդում և վերլուծություն: | ՈՒԱԳՏ<br>դասղեկներ |

2022-2023 ուսումնական տարի

Մանկավարժական խորհրդի գործունեության
պլանավորումը, գրաֆիկը, օրակարգը
7-րդ նիստ
12.05.23

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2022-2023 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական, միասնական քննություններին նախապատրաստման մասին հաղորդում: | Տնօրեն<br>ՈՒԱԳՏ | |
| 2 | Մ/մ-ների ղեկավարների հաշվետվությունը ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ | ՈՒԱԳՏ<br>մ/մ | |
| 3 | Հաշվետվություն 2-րդ կիսամյակում կատարված դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ | ՈՒԱԳՏ<br>դասղեկներ | |
| 4. | 2022-2023 ուստարվա ընթացքում 120-200 ժամ բացակա ունեցող աշակերտների հարցի քննարկում: | տնօրեն | |
| 5. | Ռազմահայրենասիրական միջոցառումների կազմակերպում: | ՈՒԱԳՏ<br>զինղեկ<br>դասղեկներ | |
| 6. | Քննությունների կազմակերպման աշխատակարգի ներկայացում, քննական հանձնաժողովների կազմի հաստատում: | տնօրեն<br>ՈՒԱԳՏ | |

2022-2023 ուսումնական տարի

Մանկավարժական խորհրդի գործունեության
պլանավորումը, գրաֆիկը, օրակարգը

8-րդ նիստ
26.05.23

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի , տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում | ՌԻԱԳՏ դասղեկ. | |
| 2. 1 | 12-րդ դասարանների սովորողներին գիտելիքների ստուգ ավարտական, պետական ավարտական քննություններին թույլատրում: | տնօրեն | |
| 2.2 | Ավագ դպրոցի 10-11-րդ դասարանների սովորողներին փոխադրական քննություններին մասնակցության թույլատրում: | տնօրեն | |
| 3. | Էլեկտրոնային մատյանների վարման աշխատանքների վերլուծություն, տեղեկատվության հաղորդում: | տնօրեն ՌԻԱԳՏ | |
| 4. | Նախատեսվող ճանաչողական, հայրենագիտական էքսկուրսիաների կազմակերպման մասին հաղորդում: | ՌԻԱԳՏ դասղեկներ | |

2022-2023 ուսումնական տարի

Մանկավարժական խորհրդի գործունեության
պլանավորումը, գրաֆիկը, օրակարգը
9-րդ նիստ
27.06.23

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2022-2023 ուսումնական տարվա 10-11-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրում: Վերաքննություն ունեցող սովորողներին ամառային առաջադրանքների հանձնարարում: 12-րդ դասարանի սովորողներին պետական նմուշի փաստաթղթի հանձնում: Գերազանց սովորողներին գովասանագրերով պարգևատրում: | Տնօրեն ՈՒԱԳՏ | |
| 2. | 2022-2023 ուսումնական տարում կատարված աշխատանքների մասին հաշվետվությունների ներկայացում: | Տնօրեն ՈՒԱԳՏ մ/մ նախ. | |
| 3. | 2022-2023 ուսումնական տարում կատարված դաստիարակչական աշխատանքների մասին հաշվետվությունների ներկայացում: | ՈՒԱԳՏ դասղեկներ | |
| 4. | Նոր ուսումնական տարում 10-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման պայմաններում՝ 2023-2024 ուսումական տարվան նախապատրաստում: | տնօրեն ՈՒԱԳՏ | |

Ուսումնական տարվա ընթացքում մինչև ուսումնական տարվա ավարտը հրավիրել հերթական և արտահերթ նիստեր:
Հերթական նիստերը հրավիրել՝ համաձայն աշխատանքային պլանում նշված ժամկետների:
Անհրաժեշտության դեպքում հրավիրել արտահերթ նիստեր՝ մանկավարժական խորհրդի անդամներին քարտուղարի միջոցով՝օրակարգի մասին հաղորդելով 3 աշխատանքային օր առաջ, առանձին դեպքերում՝ 1 օր առաջ:
Արտահերթ նիստեր հրավիրել.
1.տնօրենի նախաձեռնությամբ
2.մանկավարժական խորհրդի անդամների առնվազն 1/3 նախաձեռնությամբ:
3. Լիազորված մարմնի նախաձեռնությամբ:

Տնօրեն՝ Ա. Ավագյան

# III ԲԱԺԻՆ

## Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով | ուստարվա սկիզբ | տնօրեն, ՈՒԱԳՏ | |
| 2. | Աշխատանք տանել կաբինետները անհրաժեշտ նյութերով, պարագաներով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | տնօրեն, դասղեկներ | |
| | Աշակերտներին ապահովել դասագրքերով | Ուստարվա սկիզբ | տնօրեն, գրադարանավ. | |
| 3. | Կազմակերպել անսարք սարքավորումների վերանորոգում և դնել դրանք գործածության մեջ: | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 4. | Կազմակերպել աշխատանքներ ուսուցիչների համակարգչային գիտելիքների,ՏՀՏ գործիքների կիրառման իմացության ուղղությամբ: | 1-ին կիսամյակ 2-րդ կիսամյակ | ՈՒԱԳՏ , օպերատոր | |
| 5. | Բարձրացնել ուսպլանով նախատեսված առարկաների դասավանդման արդյունավետությունը՝ կիրառելով ՏՀՏ գործիքները, միջոցները: | ուստարվա ընթացքում | ՈՒԱԳՏ օպերատոր | |
| 6. | Ներառական կրթությունը արդյունավետ անցկացնելու համար թիմին և աշակերտների ապահովել անհրաժեշտ պարագաներով, դիդակտիկ նյութերով և դրանք ախտահանել յուրաքանչյուր պարապմունքից հետո: | ուստարվա ընթացքում | բ/թ | |
| 7. | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով կատարելագործել կաբինետային համակարգը, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան: | ուստարվա ընթացքում | տնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով դասավանդող ուսուցիչների կողմից քննարկումների կատարում և զեկույցների ներկայացում | ուստարվա ընթացքում: | տնօրեն ՈՒԱԳՏ մ/մ | |
| 9. | Ուսումնասիրել ԲՏՃՄ առարկաների դասավանդման որակի բարձրացման նպատակով՝ ֆիզիկայի, աշխարհագրության, քիմիայի կենսաբանության դասերին գործնական աշխատանքների կատարման ընթացքը | ուստարվա ընթացքում | ՈՒԱԳՏ մ/մ նախ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Հումանիտար և բնագիտամաթ. հոսքային բոլոր դասարանների դասաժամերին ՏՀՏ գործիքների կիրառում ՝ չափորոշչային պահանջների համաձայն: | պարբերաբար | ՈՒԱԳՏ, մ/մ-ների ղեկ. | |
| 11 | Հատուկ ուշադրություն դարձնել առարկայական ուսումնական ծրագրերի կատարմանը: | ուստարվա ընթացքում, | տնօրինություն մ/մ նախ. | |
| 12. | Օգնել դասղեկներին՝ ժամանակին կազմելու կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանները, հետևել դասղեկի պլանի թեմատիկայի ընտրությանը | մինչև սեպտեմբերի 10-ը | ՈՒԱԳՏ | |
| 13 | Կազմակերպել հայրենագիտական, ճանաչողական էքսկուրսիաներ հանրապետության տարբեր մշակութային վայրեր, թանգարաններ: | սեպտեմբեր-հոկտեմբեր ապրիլ-մայիս | տնօրեն դասղեկներ զինղեկ | |
| 14 | Դեռահասների շրջանում կազմակերպել բարեվարքության կանոնների տիրապետմանն ուղղված տեսական և գործնական աշխատանքներ: | ուստարվա ընթացքում | ՈՒԱԳՏ դասղեկներ | |
| 15. | Հաստատության շենքը, գույքն ու սարքավորումները խնամքով պահպանելու նպատակով դպրոցի սովորողների շրջանում անցկացնել զրույցներ: | ուստարվա ընթացքում | տնօրինություն դասղեկներ | |
| 16. | Սովորողների համար կազմակերպել քննարկումներ, որոնք կնպաստեն սովորողների շրջանում այնպիսի որակների խթանմանը ,ինչպիսիք են ընկերասիրությունը համագործակցությունը, հանդուրժողականությունը,նախաձեռնողակա- -նությունը: | ուստարվա ընթացքում | ՈՒԱԳՏ դասղեկներ | |

| | | | |
|---|---|---|---|
| 17. | Կազմակերպել հանդիպումներ ն/կ սովորողների ծնողների և մասնագետների հետ Կազմակերպել լսումներ համաներառական կրթության կարևորության մասին: | ուստարվա ընթացքում | ՈՒԱԳՏ դասղեկներ բ/թ |
| 18. | Ստեղծել և ապահովել հաղորդակցման միջավայր՝ հնարավորություն տալով սովորողներին արտահայտվել, խթանել աշակերտական խորհրդի գործունեությունը: | մշտապես | տնօրինություն աշակերտական խորհուրդ |
| 19. | Կազմակերպել նպատակային և թեմատիկ էքսկուրսիաներ | ուստարվա ընթացքում | ՈՒԱԳՏ դասղեկներ |
| 20. | Կազմակերպել հանդիպումներ իրավապահ մարմինների ներկայացուցիչների , համայնքի մշակութային բնագավառի գործիչների հետ /դերասան, նկարիչ, գրող, երաժշտագետ, արվեստագետ | ուստարվա ընթացքում | ՈՒԱԳՏ դասղեկներ |
| 21. | Ֆիզիկական դաստիարակության դասավանդման բարելավման նպատակով համալրել հաստատության մարզական գույքը: | ուստարվա ընթացքում | տնօրեն |
| 22. | Առաջնորդվել ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ. / շենքի կառուցում, անհրաժեշտ գույքով ապահովում մինչև 2026 թվականը/ Խնամքով պահպանել հին գույքը: | մշտապես | տնօրեն տեխ. համակազմ |
| 23.. | Կանոնավոր կերպով անցկացնել առողջարարական դասամիջոցներ, մարմնակրթական դադարներ /պայմանների առկայության դեպքում/: | մշտապես | ՈՒԱԳՏ, , դասղեկներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ |
| 24. | Սեղանի թենիս մարզաձևերից դպրոցում կազմակերպել միջդասարանական մրցումներ: | ուստարվա ընթացքում | ֆիզկուլտուրայի ուսուցիչ, |
| 25. | Կազմակերպել տեսաֆիլմի դիտում ..Հայաստանն իմ ազգանունն է ,, խորագրով: Կազմակերպել քննարկում՝ թեմայի շրջանակներում: | սեպտեմբեր | ՈՒԱԳՏ զինղեկ դասղեկներ 10-12-րդ դաս. |
| . 26. | Կազմակերպել հանդիպում հայրենիքի պաշտպանության մարտերին մասնակից շրջանավարտ զինվորների ու սպաների հետ: | սեպտեմբեր | Տնօրինություն Զինղեկ դասղեկներ աշակերտական խորհուրդ |
| 27. | .. Հիշատակի օր ,, մոմավառություն խաչքարի մոտ՝ ի հիշատակ 1988 թ. երկրաշարժի զոհերի: | դեկտեմբերի 7 | տնօրինություն դասղեկներ աշակերտական խորհուրդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 28. | Գրել նամականեր հայոց բանակում մարտական ծառայություն կատարող դպրոցի շրջանավարտ զինվորներին: | հունվար | դասղեկներ աշակերտական խորհուրդ 10-12-րդ դաս. սովորողներ | |
| 29. | Կազմակերպել ծանրոցների առաքում զորամասեր՝ Հայոց բանակի տոնի հունվարի 28-ի կապակցությամբ | հունվար | տնօրինություն ծնողական խորհուրդ դասղեկներ ուսուցիչներ | |
| 30. | Մարտի 8-ի կապակցությամբ աշակերտական Խորհրդի կողմից կազմակերպել ցերեկույթ /երաժշտական շնորհավորանք / | մարտ | ՈՒԱԳՏ աշակերտական խորհուրդ | |
| 31. | Հաղթանակի տուրքի մատուցում. Արցախի հերոսների հիշատակին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: | ապրիլի 2 ապրիլի 24 | Տնօրինություն զինղեկ դասղեկներ աշակերտական խորհուրդ | |
| 32. | Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան նվիրված հերթական միջոցառումներ: | ապրիլ | ՈՒԱԳՏ դասղեկներ | |
| 33. | Եխ օրվան նվիրված իրազեկման միջոցառումների կազմակերպում | մայիս | հասարակ. ուսուցիչ դասղեկներ | |
| 34. | Կազմակերպել ռազմահայրենասիրական միջոցառումներ / մրցույթ՝ զենքի քանդում-հավաքում, քայլք երգով | մայիս | զինղեկ դասղեկներ | |
| .35 | Այցելել Ալավերդու համայնքի հուշարձան--կոթող, հարգանքի տուրք մատուցել Հայրենական պատերազմում և Արցախյան հերոսամարտում զոհվածների հիշատակին: | մայիսի 9 | տնօրինություն զինղեկ դասղեկներ սովորողներ ծնողական խորհուրդ | |
| 36. | . ՀՀ ԿԳՄՍՆ կողմից սահմանված կարգի համաձայն՝ կազմակերպել .. Վերջին դաս ,, միջոցառումը: | մայիսի 26 | ՈՒԱԳՏ 12-րդ դասարանի դասղեկներ | |
| 37. | Տարեվերջյան էքսկուրսիաների կազմակերպում | **հունիս** | դասղեկներ ծնողական խորհուրդ | |

# IV ԲԱԺԻՆ

## Ներդպրոցական վերահսկողության համակարգ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ստուգել ծրագրային նյութերի և ուսումնական առարկաների թեմատիկ պլանավորման վիճակը էլեկտրոնային հարթակներում: | սեպտեմբեր 1-9 | ՈՒԱԳՏ | |
| 2. | Յուրաքանչյուր ամսվա վերջին հանրագումարի բերել սովորողների ուշացումներն ու բացակայությունները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում | ուստարվա ընթացքում | տնօրեն, դասղեկներ, ՈՒԱԳՏ | |
| 3. | Ստուգել հիմնական պարտադիր կրթության պահանջների կատարման ընթացիկ վիճակը դպրոցում՝ պետական կրթական չափորոշիչով նախատեսված գիտելիքների յուրացման, ինչպես նաև որակյալ կրթության ապահովման նպատակով՝ելնելով հանրակրթական հաստատության Կանոնադրության, ՀՀ <<Հանրակրթության մասին>> և ՀՀ<<Կրթության մասին>> օրենքի պահանջներից և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում | մշտապես | Տնօրեն ՈՒԱԳՏ դասղեկներ | |
| 4 | Վերահսկողություն սահմանել՝ դպրոցում պատշաճ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի պահպանման ուղղությամբ. մանկավարժական աշխատողների վարքականոնի, մանկավարժական աշխատող--սովորող փոխհարաբերությունների, մանկավարժական աշխատող-գործընկերներ,մանկավարժական աշխտող-ծնողական համայնք փոխհարաբերությունների նկատմամբ | մշտապես | տնօրեն | |

տնօրեն՝ Ա. Ավագյան

# V ԲԱԺԻՆ

Աշխատանք
ծնողների հետ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել դասարանական խորհրդի անդամներ և նախագահներ : | սեպտեմբերի 1-14 | ՈՒԱԳՏ, դասղեկներ | |
| 2. | Դասարանների ծնողխորհուրդների մասնակցությամբ կազմակերպել և անցկացնել հ ա մ ա դ պ ր ո ց ա կ ա ն ծնողական ժողովներ , քննարկել դպրոցի համատեղ լուծման ենթակա հարցերը, խնդիրները : | ուստարվա սկզբին և ավարտին | տնօրեն ծնողխորհրդի նախագահ | |
| 3. | Ձևավորել հաստատության ծնողական խորհուրդ, նրա անդամներին ծանոթացնել Կանոնադրությանը: | սեպտեմբերի 1-14 | Տնօրեն, ՈՒԱԳՏ | |
| 4. | Հրավիրել դպրոցական խորհրդի նիստեր՝ ըստ անհրաժեշտության, քննարկել հարցեր՝ծնողխորհրդի լիազորությունների շրջանակներում, համագործակցել դպրոցի ծնողխորհրդի հախագահի և անդամների հետ: | պարբերաբար | տնօրեն ծնողխորհրդի նախագահ | |
| 5. | Աշխատանք տանել ավագ դպրոցի սովորողների ծնողների հետ. կարդալ զեկույցներ , վարել զրույցներ ներքոնշյալ թեմատիկայով.<br>1...Սովորողների իրավունքները և պարտականությունները ,,:<br><br>2..Դպրոցում ներառական կրթության իրականացման կարևորությունը և ծնողների դերը այդ համատեքստում:,,<br><br>3...Վնասակար սովորությունների տարածման վտանգը դեռահասների շրջանում և դրանց կանխարգելման ուղիները ,, : | ուստարվա ընթացքում | Տնօրեն ՈՒԱԳՏ դասղեկներ, | |

տնօրեն՝ Ա. Ավագյան

## VI ԲԱԺԻՆ
## Ֆինանսատնտեսական գործունեության և ուսումնանյութական բազայի ամրապնդում

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Խորհրդի քննքրկմանը ներկայացնել դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվություն, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման մասին հայտը: | սահմանված ժամկետում | տնօրեն | |
| 2. | Կազմել տարիֆիկացիան Կառավարման խորհրդի հավանությանը ներկայացնել հաստատության աշխատողների դրույքաչափային տարիֆիկացիոն ցուցակը,ինչպես նաև ամենամյա ծախսերի նախահաշիվը | սեպտեմբեր | տնօրեն | |
| 3. | Սահմանված կարգով լիազորված մարմին ներկայացնել տարիֆիկացիան,հաստիքային ցուցակը, ամենամյա ծախսերի նախահաշիվը | սահմանված ժամկետում | տնօրեն<br>գլխ. հաշվապահ | |
| 4. | Ներկայացնել դպրոցի կառավարման խորհրդի հաստատմանը՝ շենքի վերանորոգման և գույքի ձեռքբերման ծախսերի նախահաշիվը : | պարբերաբար | տնօրեն | |

տնօրեն՝ Ա. Ավագյան

VII ԲԱԺԻՆ

Կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Կատարել աշխատանքի բաժանում դպրոցի տնօրենի և ուսումնական աշխատանքների գծով տեղակալի միջև: | 22.08-31.08 | տնօրեն | |
| 2. | Կազմավորել 10-րդ դասարանները | 22.08-31.08 | տնօրինություն | |
| 3. | Սահմանել հնգօրյա աշխատանքային ռեժիմ, հաստատել աշխատակարգը | 30.08.22 | տնօրինություն | |
| 4. | Ուսումնական պրոցեսը իրականացնել միահերթ: | 2022-2023 ուստարի | տնօրեն | |
| 5. | Նշանակել դասղեկներ | 22.08-30.08 | տնօրեն | |
| 6. | Նշանակել ուսումնական խմբակների ղեկավարներ | 30.08.22 | տնօրեն | |
| 7. | Նշանակել մ/մ-ների ղեկավարներ | 22.08-30.08 | տնօրեն | |
| 8. | Ուստարվա համար նախատեսել ուսումնական պարագաների, նյութերի, գույքի, սարքավորո- -ումների ձեռքբերում: | ուստարվա ընթացքում | տնօրեն | |
| 9. | Սովորողներին նախապատրաստել ուսումնական տարվա սկզբին, ծանոթացնել համաճարակային պայմաններում դասի հաճախելու կարգ ու կանոնին, անվտանգ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման կանոններին: | 30.08-09/09 | դասղեկներ | |
| 10. | Կարգավորել համալրել անձնակազմի անձնական գործերը | 2508.-31/08 | տնօրեն | |
| 11. | Կարգավորել ,համալրել սովորողների անձնական գործերը | 31.08.22-09.09.22 | դասղեկներ | |
| 12. | Լրացնել և գործածության դնել էլեկտրոնային դասամատյանները: | սեպտեմբերի սկիզբ | ՈՒԱԳՏ դասղեկներ | |
| 13. | Վարել տնօրենին կից խորհրդակցություններ. ընթացիկ ամսվա վերջին քննարկել նախորդ ամսվա կատարած աշխատանքները, կատարել վերլուծություն, համակարգել ընթացիկ աշխատանքները | ուստարվա ընթացքում | տնօրեն | |

տնօրեն Ա.Ավագյան

VIII

Աշխատանք աշակերտական խորհրդի հետ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Հրավիրել 10-12–րդ դասարանների սովորողների ընդհանուր ժողով, որի ընթացքում՝<br>- ընդհանուր ժողովում ձևավորել աշակերտական գործադիր մարմին՝ խորհուրդ<br>- Կանոնադրության հիման վրա հաստատել դպրոցի աշակերտական խորհրդի կանոնադրությունը<br>- հաստատել աշակերտական խորհրդի կազմը | Սեպտեմբեր 2-րդ տասնօրյակ | տնօրեն | |
| 2. | Մշտական աջակցություն ցուցաբերել աշակերտական խորհրդին | մշտապես | տնօրեն ՈՒԱԳՏ | |
| 3. | Դպրոցի սովորողների ընդհանուր ժողովի հրավիրում | տարեկան 2 անգամ | աշխորհրդի նախագահ | |
| 4. | Աշակերտական խորհրդի հետ համատեղ կազմակերպել ..Ինքնավարության օր ,, համադպրոցական միջոցառումը: | մայիս | Տնօրեն ՈՒԱԳՏ ուսուցիչներ աշակերտական խորհուրդ | |
| 5 | Աշակերտական խորհրդի գործունեության հիմնական խնդիրները համարել՝<br>համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը<br>հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների ամրապնդմանն ու զարգացմանը նպաստելը<br>դպրոցում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը | մշտապես | տնօրեն աշակերտական խորհուրդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 6 | Աշակերտական խորհրդի գործունեության հիմնական խնդիրները համարել՝ սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը երիտասարդ սերնդի պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը | մշտապես | տնօրեն աշակերտական խորհուրդ | |
| 7. | Համայնքային միջոցառումներին /մշակութային, սպորտային / դպրոցի աշակերտների և աշակերտական խորհրդի մասնակցություն: | ուստարվա ընթացքում | Տնօրեն աշակերտական խորհուրդ | |

Տնօրեն՝ Ա. Ավագյան